

**ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14**  
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

28.08.2003թ.

ժ. 9.<sup>30</sup>

**Մասնակցում էին՝**

Ս. Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան, (*Խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*Խորհրդի քարտուղար*)

**Հրավիրված էին՝** Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Ա. Հայրապետյան (*ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար*), Ջ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Գ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ*), Ա. Կարապետյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ*), Ն. Բաղդասարյան (*Սոցիալական ոլորտի և բնապահպանության բաժնի պետ*), Ա. Շարոյան (*Մակրոտնտեսական ցուցանիշների հաշվառման և ազգային հաշիվների բաժնի պետ*), Լ. Բեյբության (*Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժնի մասնագետ*)

**Օրակարգի նախագծում` երեք հարց.**

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 229-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

*/Ձեկուցող` Ա. Հայրապետյան/*

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1 Հաշվետվություն 2003թ. հուլիսի 7-8-ը Թբիլիսիում կայացած Շրջակա միջավայրի մոնիթորինգի հատուկ աշխատանքային խմբի առաջին խորհրդակցության վերաբերյալ.

*/Ներկայացնող` Ն. Բաղդասարյան/*

2.2 Հաշվետվություն 2003թ. հուլիսի 7-18-ը Վիեննայի միացյալ ինստիտուտում կայացած «Եռամսյակային ազգային հաշիվներ» թեմայով սեմինարի վերաբերյալ.

*/Ներկայացնող` Ա. Շարոյան/*

2.3 Հաշվետվություն 2003թ. հուլիսի 14-ից օգոստոսի 1-ը Վիեննայի միացյալ ինստիտուտում կայացած «Վճարային հաշվեկշռի վիճակագրություն» թեմայով սեմինարի վերաբերյալ.

*/Ներկայացնող` Լ. Բեյբության/*

3. Այլ հարցեր

Նախագահի կողմից ներկայացվեց Խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Քվեարկության արդյունքները- կողմ` 5, դեմ` 0, ձեռնպահ` 0/*

**Լսեցին՝**

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 229-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

*/Ձեկուցող` Ա. Հայրապետյան/*

Նշվեց, որ ՀՀ ԱՎԾ-ում քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնելու համար ու այդ պաշտոններն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմավորման գործընթացն ավելի դյուրին դարձնելու նպատակով, միաժամանակ, ընդունելով ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի

առաջարկությունը՝ հանձնաժողովների անդամների թվաքանակը կրճատելու մասին, ՀՀ ՎՊԽ հաստատմանն է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի» և «Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության առաջատար և կրտսեր քաղաքացիական ծառայողների ատեստավորման հանձնաժողովի» աշխատակարգերում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծ:

## **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ ու այդ պաշտոններն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին» N 229-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

որոշմամբ հաստատված հավելված 1-ի և 2-ի

1) 6-րդ կետերի «9» թիվը փոխարինել «6» թվով.

2) 6-րդ կետերի «ա», «բ» և «գ» ենթակետերի «երեք» բառը փոխարինել «երկու» բառով:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1 Հաշվետվություն 2003թ. հուլիսի 7-8-ը Թբիլիսիում կայացած Շրջակա միջավայրի մոնիթորինգի հատուկ աշխատանքային խմբի առաջին խորհրդակցության վերաբերյալ.

*/Ներկայացնող՝ Ն. Բաղդասարյան/*

2.2 Հաշվետվություն 2003թ. հուլիսի 7-18-ը Վիեննայի միացյալ ինստիտուտում կայացած «Եռամսյակային ազգային հաշիվներ» թեմայով սեմինարի վերաբերյալ.

*/Ներկայացնող՝ Ա. Շաբոյան/*

2.3 Հաշվետվություն 2003թ. հուլիսի 14-ից օգոստոսի 1-ը Վիեննայի միացյալ ինստիտուտում կայացած «Վճարային հաշվեկշռի վիճակագրություն» թեմայով սեմինարի վերաբերյալ.

*/Ներկայացնող՝ Լ. Բեյբության/*

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունելի գիտություն:

*/Արձանագրային/*

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան